"ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ" ՓԲԸ

"Էլեկտրամատակարարման հուսալիության" ծրագիր

Վարկ թիվ 8055-AM

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություն և անկախ աուդիտորական եզրակացություն

"Էլեկտրամատակարարման հուսալիության" ծրագիր 01.01.2013 - 31.12.2013թթ. ժամանակաշրջանի համար

"ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ" ՓԲԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ղեկավարության պատասխանատվության վերաբերյալ հղում՝ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար

	էջ
• Հաշվեկշիռ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
• Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
• Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	8
• Ծախսերի մասին հաշվետվության (ԾՄՀ) ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	9
• Հատուկ հաշվի հաշվետվություն	10
• Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Tel: +992 44 600 8833
Fax: +992 44 600 8822
www.bdo.tj

Tajikistan
734003, Dushanbe
137 Rudaki Avenue

ԱՆԿԱԽ ԱՐԴՅՈՒՆԱՆԵՐԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունը, այդ թվում՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծրագրի հաշվեկշիռը, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունները, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունները, ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումները, Հատուկ հաշվի հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (այսուհետ՝ «Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ»), որոնք ֆինանսավորվել են՝ համաձայն 2011թ. հունիսի 1-ին կնքված Վարկ թիվ 8055-AM-ի, ինչպես նաև 2011թ. հունիսի 1-ին կնքված ծախսերի օրդերի (այսուհետ՝ «Ֆինանսավորման համաձայնագիր»): Սույն Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ղեկավարության կողմից՝ համաձայն Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված ծրագրերի համար մշակված տարեկան ֆինանսական հաշվետվության և աուդիտի Ուղեցույցների, որոնք թողարկվել են Համաշխարհային Բանկի ֆինանսական կառավարման սեկտորի խորհուրդի կողմից և ներառում են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված ներդրումային գործառնությունների ֆինանսական կառավարման ձեռնարկը՝ «RM 3 - ֆինանսական հաշվետվություն և աուդիտ» («Համաշխարհային Բանկի ուղեցույցներ»), ինչպես նաև «Ֆինանսավորման համաձայնագրի» դրույթները:

Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Համաշխարհային բանկի ուղեցույցների եւ ֆինանսավորման համաձայնագրի դրույթների համաձայն սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին

BDO LLC registered under the laws of Tajikistan, is member of BDO International Limited, a UK company limited by guarantee, and form part of the international BDO network of independent member firms. Each member firm is a separate legal entity. Nothing in the arrangements or rules of the BDO network shall constitute or imply an agency relationship or a partnership between BDO International Limited and the member firms of the BDO network.

Tel: +992 44 600 8833
Fax: +992 44 600 8822
www.bdo.tj

Tajikistan
734003, Dushanbe
137 Rudaki Avenue

վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, 2013թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի և 2013թ. դեկտեմբերի 31-ին դրամական միջոցների մնացորդը, բոլոր էական առումներով, պատրաստված են Համաշխարհային Բանկի ուղեցույցների և ֆինանսական համաձայնագրի դրույթների համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության և տարածման ու օգտագործման վերաբերյալ սահմանափակումների հիմքերը

Առանց փոփոխելու մեր կարծիքը, մենք հրավիրում ենք Ձեր ուշադրությունը ծանոթագրություն 2-ին, որտեղ նկարագրված է Հաշվապահական հաշվառման քաղաքանությունը: Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ նպատակ ունենալով աջակցելու Ընկերության ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի Ուղեցույցներին եւ ֆինանսավորման համաձայնագրի դրույթներին համապատասխանության գործում: Արդյունքում, հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կարող են հարմար չլինել մեկ այլ նպատակով կիրառման համար:

Մեր հաշվետվությունը նախատեսված է միայն Ընկերության ղեկավարության, ՀՀ Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի օգտագործման համար և չպետք է տարածվի կամ օգտագործվի այլոց կողմից:

Այլ հանգամանքներ

Առանց փոփոխելու մեր կարծիքը, մենք հրավիրում ենք Ձեր ուշադրությունը այն հանգամանքի վրա, որ Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը 2012թ հունվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար իրականացվել է Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի կողմից, որը 2013թ. հունիսի 10-ին նշված հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել է չճնափոխված կարծիք:

Ֆիրուզ Բուլբուլով, Աուդիտոր
ք. Երևան, ՀՀ

BDO
17 JUN 2014

BDO LLC registered under the laws of Tajikistan, is member of BDO International Limited, a UK company limited by guarantee, and form part of the International BDO network of independent member firms. Each member firm is a separate legal entity. Nothing in the arrangements or rules of the BDO network shall constitute or imply an agency relationship or a partnership between BDO International Limited and the member firms of the BDO network.

Ղեկավարության պատասխանատվության վերաբերյալ հղում՝ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար

Սույն հղումը, որը պետք է համատեղվի անկախ աուդիտորական եզրակացության մեջ նշված անկախ աուդիտորի պատասխանատվության հետ, նպատակ ունի տարբերակել ղեկավարության և անկախ աուդիտորի համապատասխան պատասխանատվությունները, որոնք վերաբերում են «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի» (այսուհետ՝ «Ծրագրի») Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին, որոնք ներառում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, ծախսերի մասին հաշվետվության (ԾՄՀ) ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումները, հատուկ հաշվի հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (այսուհետ՝ «Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ») և ֆինանսավորվել են համաձայն 2011թ. հունիսի 1-ին կնքված Վարկ թիվ 8055-AM-ի բ, ինչպես նաև 2011թ. հունիսի 1-ին կնքված ծախսերի օրդերի (այսուհետ՝ «Ֆինանսավորման համաձայնագիր»):

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ղեկավարությունը պատասխանատու է սույն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ինչպես նաև Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված ծրագրերի համար մշակված տարեկան ֆինանսական հաշվետվության և աուդիտի Ուղեցույցների, որոնք թողարկվել են Համաշխարհային Բանկի ֆինանսական կառավարման սեկտորի Խորհուրդի կողմից և ներառում են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված ներդրումային գործառնությունների ֆինանսական կառավարման ձեռնարկը՝ «RM 3 - ֆինանսական

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս ղեկավարությունը կրում է հետևյալ պատասխանատվությունները.

- ընտրել հաշվապահական հաշվառման համապատասխան սկզբունքները և հետևողականորեն կիրառել դրանց
- կատարել գնահատումներ և կայացնել որոշումներ, որոնք հիմնավորված և ողջամիտ են,
- նշել արդյոք իրականացվել են Ֆինանսավորման համաձայնագրի պահանջները, հրապարակել բոլոր էական շեղումները և տրամադրել դրանց բացատրությունները ֆինանսական հաշվետվություններում,
- տրամադրել հավելյալ բացահայտումներ, եթե Ֆինանսավորման համաձայնագրի որոշակի պահանջներին համապատասխանությունը անբավարար համարվի՝ թույլ տալով օգտագործողներին հասկանալու որոշակի գործարքների, այլ դեպքերի և պայմանների ազդեցությունը՝ համաձայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվության, Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվության, ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումների և Հատուկ հաշվի հաշվետվության 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև

- Ծրագրի շրջանակներում ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- պատշաճ հաշվապահական հաշվառման վարման համար, որը ցանկացած պահի կարտացոլի ճշմարիտ տեղեկատվություն Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների մասին, և կապահովի Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը Ֆինանսավորման համաձայնագրի պահանջներին և Համաշխարհային Բանկի ուղեցույցներին,
- կատարել սահմանված հաշվապահական գրանցումներ՝ Ֆինանսավորման համաձայնագրի պահանջներին և Համաշխարհային Բանկի ուղեցույցներին համապատասխան,
- կազմակերպել Ծրագրի ակտիվների պահպանումը՝ ղեկավարությանը հասանելի ողջամտության միջոցներով,
- հայտնաբերել և կանխարգելել խարդախությունները և այլ խախտումները:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար թույլատրվել են հրապարակման համար 10 հունիսի 2013թ. ստորագրությամբ՝

Գլխավոր տնօրեն	Գլխավոր հաշվապահ
Արամ Անանյան	Արտավազդ Ղազարյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
Վարկ թիվ 8055-AM

Հաշվեկշիռ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարով

	Ծան.		31.12.2013		31.12.2012
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:					
Դրամական միջոցներ դրամարկղում		-		-	
Հատուկ հաշիվ (ԱՄՆ դոլար)		236		14	
Հաշիվ տեղական արժույթով (ՀՀ դրամ)		-		-	
			236		14
Կանխավճարներ մատակարարների և կապալառուների գծով	4.		5 269 683		4 087 381
Ծրագրի ծախս			1 943 698		1 001 845
Ընդամենը ակտիվներ			7 213 617		5 089 240
Կուտակված ֆոնդեր և պարտավորություններ					
Կրեդիտորական պարտքեր	5.		263 148		-
Ֆինանսավորում:					
ՎԶՄԲ	6.	6 823 600		4 985 166	
ՀՀ կառավարություն		103 397		95 416	
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ		2 008		2 008	
Այլ		358		358	
			6 929 363		5 082 948
Փոխարժեքային տարբերություններ			21 107		6 292
Ընդամենը կուտակված ֆոնդեր և պարտավորություններ			7 213 617		5 089 240

Ծանոթագրություններ 1-12-ը հանդիսանում են սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Արամ Լեռնյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
Վարկ թիվ 8055-AM

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարով

Սկզբնական աշխատանքային կապիտալ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14
Կանխավճարներ	4 087 381
Կրեդիտորական պարտքեր	-
Ընդամենը	***4 087 395***

	ՓԱՍՏԱՑԻ		ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ		ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ	
	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը
ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ						
IBRD	*1 838 434*	*6 823 600*				
ՀՀ կառավարություն	7 981	103 397				
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	-	2 008				
Այլ ֆինանսավորում	-	358				
Ընդամենը	***1 846 415***	***6 929 363***				
Փոխարժեքային տարբերություններ (եկամուտ/կորուստ)	14 814	21 107				
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ						
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ վերապատրաստում և աուդիտ, ծրագրի գործառնական ծախսեր *	941 853	1 127 745	13 764 300	13 950 192	(12 822 447)	(12 822 447
Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	-	-	-	-	-	-
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	-	718 453	-	718 453	-	-
Սկզբնական վճար	-	97 500	-	97 500	-	-
Ընդամենը	**941 853**	**1 943 698**	**13 764 300**	**14 766 145**	**(12 822 447)**	**(12 822 447**

Վերջնական աշխատանքային կապիտալ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	236
Կանխավճարներ	5 269 683
Կրեդիտորական պարտքեր	(263 148)
Ընդամենը	**5 006 771**

Ծանոթագրություններ 1-12-ը հանդիսանում են սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:
*Բյուջեի շեղումների բացատրությունը տրված է Նշում 11-ում

Գլխավոր տնօրեն
Արամ Հովանիսյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան

էջ 7

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
Վարկ թիվ 8055-AM

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարով

Ծրագրի բաղադրիչ	ՓԱՍՏԱՑԻ		ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ		ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ		ԾԳՓ
	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	Ընթացիկ տարի	Ծրագրի սկզբից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	Ծրագիր
Էլեկտրաէներգիայի ցանցի ամրապնդում	417 565	417 565	13 699 000	13 699 000	(13 281 435)	(13 281 435)	45 302 500
Տեխնիկական օժանդակություն	524 288	1 428 633	65 300	969 645	458 988	458 988	4 700 000
Ծավալների փոփոխությամբ պայմանավորված չնախատեսված ծախսեր	-	-	-	-	-	-	1 400 000
Գների փոփոխությամբ պայմանավորված չնախատեսված ծախսեր	-	-	-	-	-	-	500 000
Սկզբնական վճար	-	97 500	-	97 500	-	-	97 500
Ընդամենը	941 853	1 943 698	13 764 300	14 766 145	(12 822 447)	(12 822 447)	52 000 000

Ծանոթագրությունները 1-12-ը հանդիսանում են սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Արմեն Ամանյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
Վարկ թիվ 8055-AM

ՄՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարով

Դիմումի համար	Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ վերապատրաստում և աուդիտ, ծրագրի գործառնական ծախսեր *	Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	Սկզբնական վճար	Ընդամենը
Ընդամենը	-	-	-	-	-

Ծանոթագրություններ 1-12-ը հանդիսանում են սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Նորայր Մանվելյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
Վարկ թիվ **8055-AM**

Հատուկ հաշվի հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարով

		31-ը դեկտեմբերի, 2013թ.
Հաշվի համար		900000910118
Հատուկ հաշվի բացումը		Կենտրոնական գանձապետարան
Հասցե՝		ք. Երևան, Մելիք Ադամյան փ. 1
Շնորհի համաձայնագիր		Ծրագրի գծով համաձայնագիր
Արժույթ		ԱՄՆ դոլարով
		ԱՄՆ
Մնացորդ առ 1 հունվարի 2013թ.		**14**
Ավելացնել՝		
Կուտակված չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	112 800	
	112 800	112 800
Նվազեցնել՝		
ՎԶՄԲ-ին փոխհատուցում տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդ (1)		112 814
Մնաացորդ առ 31-ը դեկտեմբերի 2013թ.		236
Ավելացնել՝		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	112 578	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	112 578	112 578
Նվազեցնել՝ ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		**112 814**
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) - (2)		-

Ծանոթագրություններ 1-12-ը հանդիսանում են սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Դավիթ Մնացականյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան

Նշումներ Հատուկ նպատանկերի ֆինանսական Հաշվետվությունների համար
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1 Ծրագրի նկարագրություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 1998թ. հուլիսի 20-ի N450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի N709 որոշման հիման վրա «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ճանապարհով; Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է:

Ընկերությունն իրականացնում է Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիրը (Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2011թ. հունիսի 1-ին կնքված թիվ 8055-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև: Նույն ամսաթվին ստորագրվել է Ծրագրի համաձայնագիրը Ընկերություն և ՎԶՄԲ-ի միջև: Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2011թ. նոյեմբերի 18-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից 39,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրված վարկի գումարը փոխանցել (վերավարկավորել) է Ընկերությանը, որն էլ այդ միջոցները պետք է օգտագործի բացառապես Ծրագիրն իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում

Աշխատանքների, ապրանքների և տեխնիկական աջակցության ապահովում, ներառյալ նաև հողի ձեռք բերման ու վերաբնակեցման հետ կապված փոխհատուցումներն ու բողոքի մեխանիզմները՝ ներկայումս գործող Հրազդանի ՋԷԿ-ից դեպի Շինուհայրի ենթակայան գնացող էլեկտրահաղորդիչ գծի փոխարինման համար:

Մաս Բ. Տեխնիկական օժանդակություն

Ապրանքների և տեխնիկական աջակցության, այդ թվում նաև ուսուցանման և գործառնական ծախսերի ապահովում Ընկերության համար՝ ուղղված իր կադրերի կարողությունների ամրապնդմանը տեխնիկական վերահսկողության, պլանավորման, գնումների, ֆինանսական կառավարման, Ծրագրի կառավարման և դաշտային աշխատանքների վերահսկման ոլորտներում:

Ի հավելումն Ծրագրի բաղադրիչների՝ Ծրագրի գնահատման փաստաթղթով նախատեսված է նաև ծավալների և գների փոփոխությամբ պայմանավորված չնախատեսված ծախսեր և սկզբնական վճարներ:

Նշումներ Հատուկ նպատանկերի ֆինանսական Հաշվետվությունների համար
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ստորև ներկայացված է աղյուսակում նկարագրված են Թույլատրելի Ծախսերի հոդվածները, որոնք կարող են ֆինանսավորվել Վարկով

Հոդված	Վարկի հատկացված գումարը (արտահայտվա	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը((արտահ
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ներառյալ վերապատրաստումն ու աուդիտը, ծրագրի գործառնական ծախսեր	35 902 500	100%
Ծրագրով նախատեսված հողի ձեռք բերման /բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	2 000 000	100%
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	1 000 000	Ընդհանուր դրույթների 2.07(ա) բաժնի համաձայն փոխհատուցման ենթակա գումար
Սզբնական վճար	97 500	Վարկային Համաձայնագրի 2.03 բաժնի և Ընդհանուր դրույթների 2.07(բ) բաժնի համաձայն
Ընդամենը	39 000 000	

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Համաշխարհային Բանկի ուղեցույցի հոդվածների և թիվ 8055-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն:

Հաշվեգրման սկզբունքի համաձայն եկամուտը և ճանաչվում է , երբ դրանք տեղի են ունեցել անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից:

2.1 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ դրամը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը: Այս հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

2.2 Արտարժույթով գործարքների (բացառությամբ ԱՄՆ դոլար)

Այլ արժույթով ներկայացված գործարքները փոխարկվել են ԱՄՆ դոլարով հետեւյալ կերպ.
- ՀՀ դրամով կատարված համաֆինանսավորումը փոխարկվում է ԱՄՆ դոլարի փոխանցման կատարված
- Այն վճարումները, որոնք կատարվել են կապալառուներին/մատակարարներին/խորհրդատուներին ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով փոխարկվում են փոխանցման կատարված օրվա դրությամբ՝ Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված փոխարժեքին համապատասխան
- Դրամական ակտիվները (այդ թվում՝ կանխավճարները) և պարտավորությունները փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ հաշվետվության օրվա դրությամբ Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված փոխարժեքին

Հայաստանի Կենտրոնական Բանկի կողմից պաշտոնական հայտարարված փոխարժեքներն են՝ 2013թ. դեկտեմբերի 31 դրությամբ՝ 405.64 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի և 559.54 ՀՀ դրամ 1 Եվրոյի համար, 2012թ դեկտեմբերի 31 դրությամբ՝ 403.58 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի և 532.24 ՀՀ դրամ 1 Եվրոյի համար:

Փոխարժեքային տարբերությունները ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և վերջիններիս համընդհանուր արժեքը բացահայտվում է

2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8055-AM վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ հետևյալ կերպ.

•Ուղղակի վճարման ընթացակարգը ենթադրում է, որ Բանկը Վարկառուի խնդրանքով վճարում է երրորդ կողմին թույլատրելի ծախսերի համար:

• Փոխհատուցման ընթացակարգը ենթադրում է, որ Բանկը վճարում է Վարկային հաշվից Վարկառուին թույլատրելի ծախսերի համար, որոնք վճարվել էին սեփական միջոցներից և իրավունք ունեն ռետրոակտիվ ֆինասավորման:

• Կանխավճարի ընթացակարգ- Բանկը կարող է կարող է վարկի գծով ստացված մուտքերը փոխառուի հատուկ հաշվին՝ իրավասու ծախսերի առաջացման պահին վերջիններիս մարման նպատակով, որոնց համար հավաստող փաստաթղթերը տրամադրվում են ավելի ուշ ամսաթվով:

• Հատուկ պարտավորություն: Բանկը կարող է վճարում կատարել երրորդ կողմին թույլատրելի ծախսերի համար, Վարկառուի խնդրանքով և Բանկի ու Վարկառուի միջև համաձայնեցված պայմանների ներքո:

2.4 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք ներառում են ծառայությունների և ապրանքների համար վճարված գումարները, չափվում են անվանական արժեքով: Այլ արժույթով ներկայացված կանխավճարներն արտահայտվում են ԱՄՆ դոլարով տարբերվող՝ Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված փոխարժեքին համապատասխան:

2.5 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով: Այլ արժույթով ներկայացված կրեդիտորական պարտքերը արտահայտվում են ԱՄՆ դոլարով տարբերվող՝ Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված փոխարժեքին համապատասխան:

Նշումներ Հատուկ նպատանկերի ֆինանսական Հաշվետվությունների համար
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

3. Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2016թ. հունիսի 30-ը

4. Կանխավճարներ	Դեկտեմբերի 31, 2013 ԱՄՆ դոլարով	Դեկտեմբերի 31, 2012 ԱՄՆ դոլարով
Կանխավճարներ ապրանքների մատակարարման և աշխատանքների կատարման, խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով		
- Կալպատաու Փաուեր Տրանսմիշն ՍՊԸ	5 056 983	4 087 381
- Հայֆաբ Օու	212 699	-
Ընդամենը	**5 269 683**	**4 087 381**

5. Պարտավորություններ	Դեկտեմբերի 31, 2013 ԱՄՆ դոլարով	Դեկտեմբերի 31, 2012 ԱՄՆ դոլարով
Պարտավորություններ ապրանքների մատակարարման և աշխատանքների կատարման, խորհրդատվական ծառայությունների մատուցման գծով		
- Կալպատաու Փաուեր Տրանսմիշն ՍՊԸ	133 284	-
- Հայֆաբ Օու	129 864	-
Ընդամենը	**263 148**	**-**

6. Դրամական միջոցների ստացման ժամանակացույց	2013 ԱՄՆ դոլարով	2012 ԱՄՆ դոլարով	Կուտակված ներդրում 2013 թ դեկտեմբերի 31 դրությամբ ԱՄՆ դոլարով
ԾՄՀ ընթացակարգեր	-	9 961	132 933
Ուղակի վճարում	1 725 634	4 087 381	6 312 228
Հատուկ հաշվի կանխավճար	112 800	178 100	290 900
Այլ ընթացակարգեր		141 280	141 280
Սկզբնական վճար	-	-	97 500
Հատուկ հաշվի կանխավճարի մարում	-	(151 241)	(151 241)
Ընդամենը	**1 838 434**	**4 265 481**	**6 823 600**

7. Հիմնական միջոցներ

Հաշվետու տարվա ընթացքում Ծրագրի Ղեկավարությունը չի գնել կամ շահագործել որևէ հիմնական միջոց Ծրագրի համար, բոլոր գնումները՝ սարքավորումների գծով, գնման օրով ճանաչվել են ծախս:

8. Կառավարության ներդրում

Վարկային պայմանագրի համաձայն, ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և ՀՀ Կառավարության միջև 2011թ. Հունիսի 1-ին, ՀՀ Կառավարությունը պարտավորվում է ներդնել Ծրագրում 13,000,000 ԱՄՆ դոլար: Ստորև բերված աղյուսակում նկարագրված է ՀՀ Կառավարության ներդրումը 2013թ դեկտեմբերի 31, 2012թ դեկտեմբերի 31 դրությամբ:

	2013 ԱՄՆ դոլարով	2012 ԱՄՆ դոլարով	Կուտակված ներդրում 2013թ դեկտեմբերի 31 դրությամբ ԱՄՆ դոլարով
Ծրագրի հոդվածներ:			
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ներառյալ վերապատրաստումն ու աուդիտը, ծրագրի գործառնական ծախսեր	7 981	18 556	103 397
Ծրագրով նախատեսված հողի ձեռք բերման /բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ		-	-
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում		-	-
Սկզբնական վճար		-	-
Ընդամենը	7 981	18 556	103 397

9. Ծրագրի շրջանակներում Ընկերության կողմից ստացված գումարների և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի փոխհատուցումների համադրում

Հոդված	Հայտ	Ընկերություն	ՎԶՄԲ	Տարբերություն
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ վերապատրաստում և աուդիտ, ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-5	1 047 024	1 047 024	-
	DA-7	270 400	270 400	-
	DA-9	43 112	43 112	-
	DA-10	106 709	106 709	-
	DA-12	65 348	65 348	-
	DA-14	63 734	63 734	-
	DA-17	129 308	129 308	-
		1 725 634	**1 725 634**	-

Հատուկ հաշվի կանխավճար

	DA-8	7 100	7 100,00	-
	DA-15	33 000	33 000,00	-
	DA-16	72 700	72 700,00	-
		112 800	112 800	-
Ընդամենը ըստ ժամանակաշրջանի		1 838 434	1 838 434	-

10. Ակրեդիտիվ

Համաձայն պայմանագիր № HV-W-1/2011 պահանջների, կնքված «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (Պատվիրատու) և «Կալպատառու Փաուեր Թրանսմիշն» ՍՊԸ-ի (Կապալառու) միջև 2012թ նոյեմբերի 12-ին, ինչպես նաև 2013թ ապրիլի 24-ին կնքված Հավելված # 1-ի, Պատվիրատուն դիմել է ՎԶՄԲ-ին՝ թողարկելու հաստատված փաստացի ակրեդիտիվ՝ 11,587,214.32 ԱՄՆ դոլար արժեքով, որը տրամադրվում է Կապալառուին Առևտրի Արևելյան բանկում: 11,587,214.32 ԱՄՆ դոլար արժեքով ակրեդիտիվը թողարկվել է 2013թ. ֆինանսական տարում՝ դրամական միջոցների ստացման դիմումի՝ No.

Ակրեդիտիվի այս գումարը ներառված չէ Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններում, սակայն գրանցված են Clientconnection -ում որպես առանձնահատուկ պարտավորություն

Ակրեդիտիվ	Դեկտեմբեր 31, 2013 ԱՄՆ դոլարով	Դեկտեմբեր 31, 2012 ԱՄՆ դոլարով
- Կալպատառու Փաուեր Տրանսմիշն ՍՊԸ	11 587 214	-

11. Բյուջեից շեղման բացատրություն

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) կողմից ֆինանսավորվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի 2013 թ.-ի բյուջեն կազմվել էր 2012 թ.-ի հուլիսին, որով նախատեսված էր, որ պայմանագիրը Կապալառուի հետ պետք է ստորագրվեր 2012 ավարտին, համաձայն որի Կապալառուն 2013 թ -ի առաջին կիսամյակում պետք է ավարտեր նախագծման աշխատանքները , իսկ տարվա երկրորդ կեսին պետք է իրականացներ ապրանքների մատակարարումը և տեղադրման աշխատանքները: Սակայն, ակրեդիտիվի բացման հետաձգման պատճառով, որը անհրաժեշտ էր բացել համաձայն ՀԲ - ի ընթացակարգերի՝ Հաճախորդի կողմից ի օգուտ Կապալառուի, պայմանագիրը ստորագրվեց 2013թ. մարտի 5 - ին : Հնդկական Kalpataru POWER TRANSMISSION ՍՊԸ , որպես Կապալառու , 2013 թ.-ին իրականացրեց նախագծման և թեստավորման աշխատանքները համաձայն ծրագրի ժամանակացույցի.

12 Հետ հաշվեշռային դեպքեր

Այնպիսի դեպքեր տեղի չեն ունեցել, որոնք կարող են ազդել Ծրագրի իրականացմանը և/կամ Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների վրա:

13 Ընդհանուր

Գումարները կլուծվեն են դեպի մոտակա ԱՄՆ դոլարը:

Գլխավոր տնօրեն
Արամ Անանյան

Գլխավոր հաշվապահ
Արտավազդ Ղազարյան